

նին ցուցրենն և գործատեարց հետ շա-
հերնուն վրայօք խօսին . բայց հանդարտ
և ոչ բռնի պահանջողութիւն կ'ըլլայ ա-
սիկա . առօրեայ բան՝ միայն միտք հաս-
կընալու չափ : Եւ սակայն այս ալ այն-
պէս վտանգաւոր է , չափն անցնիլն՝ աւ-
րուիլն ու դառնանալն այնպէս դիւրին՝
մէկէն կիրք մտնելուն պատճառաւ , որ
ես խորհուրդ կու տամ գործաւորաց
ասկէ ալ ետ կենալու :

Համառօտենք ուրեմն . գործաւորք
զլուխ զլիսի տալով ու միանալով՝ — թող
անկէ ծագած չար արդիւնքն զոր բա-
ցատրեցի , — չեն կրնար յարատե բար-
ձրութեան մէջ մնայուն ռոճիկ ապահո-
վել իրենց՝ միայն թէ գործոյն պէտք ե-
ղած ամեն գործաւորք միաբան չըլլան .
թէպէտ և այնպիսի առթի մէջ պահան-
ջողութեան հարկ չկայ , վարձք բնա-
կան կ'աւելնան : Միայն դրամագլխոյն
նկատմամբ ժողովրդեան յարաբերու-
թիւնը կրնայ յարատե ազդեցութիւն
ընել ռոճկաց չափին վրայ . եթէ դնենք
որ ժողովուրդն աւելնայ՝ այն ատեն ան-
վրէպ դինը կ'իյնայ . և եթէ համարինք
որ հասարակաց հարստութիւնը շատ-
նայ՝ գործակալք որչափ ալ հակառակ
ջանան՝ վարձք պէտք է որ բարձրանան :

Իսկ պահանջողութիւնք և դադար-
մունք՝ ռոճկաց վրայ ձախորդ ազդեցու-
թիւն ունին՝ դրամագլուխը նուազեցնե-
լով . վասն զի այն ժամավաճառութեան
ատեն դրամագլուխը անբեղուն են .
տեարք և գործաւորք կը սպառեն ա-
ռանց արդիւնաբերութեան : Այսպիսի
անգործութենէ ետքը՝ ինչպէս ամեն
յուզմունքէ ետքն որ կը դանդաղեցնեն
զաշխատութիւն՝ միշտ ազգային դրա-
մագլուխը պակասած է : Այս ալ անգոր-
ծութեան մէկ նոր անպատեհութիւնն
է , զոր պէտք էր յիշել :

ՌԱԲԷ

Կը շարունակուի :

ԵՐԳ ՄԵԾ ՍԻՐՈՅ

« ԲՈՒՆ Է ԻՐԲԷ զՄՈՏ՝ ՍԷՐ » , կանչեց ամենէն իմա-
տուն անուանեալ մարդն ալ , Սողոմոն . և անշուշտ ինքն
չէր որ նախ զայն զգաց , այլ գոնէ ամենէն հին և զօրաւոր
գրողն է մեզի համար այն կրից վայօք՝ որ ամենէն խոր
ազգած է՝ ի սիրտս , և ամենէն բարձր և ազգու ձայներ լսե-
ցուցեր է : Սակայն այն ատեն անտարակոյս ամենախոր և
ամենաբարձր կ'ըլլայ սերն և իր բացատրութիւնն՝ երբ իր
առիթն ըլլայ ճշմարտապէս ամենաախրելի . վասն զի եթէ
առաջին տաճարաշէնն (Սողոմոն) մահուան սաստկութե-
հաւասարեցուց զՍԷՐ , երկրորդ տաճարաշէնն (Չօրա-
բարէլ) ըսաւ . « Քան զամենայն յաղթող է ճշմարտու-
թիւն » : Երբ ճշմարտութիւն և սէր միաբանին արժանա-
պէս՝ իրենց ձայնն ալ զօրաւոր և յաղթող կ'ըլլայ քան
զամենայն ձայնս և երգս . « և մնայ յաւիտեանս » :

Այսպիսի ձայներէն մէկն է հետեւեալ Երգն սիրոյ . ու
րոյ մէջ հոմերական և անակրէոնեան արուեստ չկայ , (մա-
նաւանդ մեր պարզ և արձակ թարգմանութեան մէջ ,)
այլ սաստկութիւն զգացմանն և համարակուցութիւն բա-
ցատրութեանն՝ ոչ միայն կը գերազանցէ զանոնք և անոնց
նմանիքը , այլ և խիստ քիչ թուով իրեն հաւասարող ու-
նի , և հազիւ գտուին : Աւելի ալ զարմանալի կըրնայ
համարուիլ երբ յայտնուի հեղինակն տկար սեռէ անձ
մը , կին մը , ԹԵՐԵՅԻԱ անուամբ . որոյ համբան լցած է
զեկեղեցի և զաշխարհ , և անոր համար իր անունն ալ ընդ-
ունելի եղած նաև մերայոց և օտար արեւելեայ քրիստո-
նէից , որք տարուէ տարի տօնեն կամ յիշեն զնա (յ՝ 3—15
հոկտեմբերի) :

Կ'ապրիմ ես առանց ինձմով ապրելու . և ա-
նանկ գերագոյն կեանքի մը կը սպասեմ փափա-
գանօք , որ կը մեռնիմ չմեռնելուս համար :

Այս միութիւնս ընդ Աստուծոյ , և այս սէրս
որ ոյժ կու տայ կենացս , զԱստուած ինծի գերի
կ'ընեն և սիրտս ազատ կը թողուն . բայց այնքան
ծանր վիշտ է ինծի զԱստուած ինծի գերի աեսնել ,
որ կը մեռնիմ չմեռնելուս համար :

Ա՛հ . ի՞նչ երկայն է այս կեանքս . ի՞նչ դառն է
այս պանդխտութիւնս . ի՞նչ մութ է այս բանտս .
ի՞նչ ծանր են հոգիս կապող շղթաներն : Միայն
ազատութեան սպասելս իսկ այնքան սաստիկ կըս-
կիծ կու տայ ինծի՝ որ կը մեռնիմ չմեռնելուս
համար :

Ո՛հ . որքան դառն է կեանք՝ երբ մարդ չի կըր-
նար վայելել զԱստուած : Եթէ քաղցր է սէր ,
երկայն սպասելն ալ դառն է : Տար Աստուած որ
ազատէի այս բեռէս՝ որ ծանր է քան զերկաթ .
վասն զի կը մեռնիմ չմեռնելուս համար :

Կ'ապրիմ միայն այս յուսով որ պիտի մեռնիմ .
վասն զի այս կեանքս լմրնալով կ'ապահովէ իմ
յոյսս : Ո՛վ մահ , որով կեանք կը ստանանք , մի
ուշանար , քեզի կը սպասեմ , և կը մեռնիմ չմեռ-
նելուս համար :

Տես , ի՞նչպէս զօրաւոր է սերն , թի կեանք , և
մի ձանձրացընէր զիս . տես , որ զքեզ վաստակե-
լու համար՝ պէտք է զքեզ կորուսանել : Թող
գայ այն քաղցր մահն . թող գայ այն զուարճալի
օրհասն . վասն զի կը մեռնիմ չմեռնելուս հա-
մար :

Ճշմարիտ կեանք՝ երկնաւոր կեանքն է . բայց
չենք կըրնար վայելել զայն՝ ինչուան որ չի լմրնայ
երկրաւորս : Ո՛վ մահ , մի արհամարհեր զիս . ես
նախ մեռնելով կ'ապրիմ , վասն զի կը մեռնիմ չմեռ-
նելուս համար :

Ո՛վ կեանք , ի՞նչ կըրնամ տալ իմ Աստուծոյս՝
որ յիս կեայ . կամ ի՞նչ կըրնամ ընել իրեն հա-

մար, բայց եթէ կորուսանել զքեզ՝ որպէս զի լաւ
ևս զինքը շահիմ: Կ'ուզեմ հիմակուրնէ ընդունիլ
զնա, վասն զի միայն զինքը կը սիրեմ, և կը մեռ-
նիմ չմեռնելու համար:

Քեզմէ հեռու, ո՞վ Աստուած իմ, ես ի՞նչ կեանք
կրնամ ունենալ. և կամ ի՞նչ կրնամ ընել, բայց
եթէ կրել մահ մը, ամենէն ցաւալի մահը: Սո իմ
վրաս կը խղճամ երբ կը տեսնեմ իմ վշտացս սաստ-
կութիւնը. վասն զի կը մեռնիմ չմեռնելու հա-
մար:

Ջրէն գուրս ցատքած ձուկն՝ կրնայ գոնէ քիչ
մը գիւրութիւն գտնել. գերեզման իջողին ալ
գոնէ մահն թեթեւութիւն մ'է. իսկ իմ ցաւագին
կենացս՝ որ մահ կրնայ բաղդատուիլ, որ կը
մեռնիմ չմեռնելու համար:

Երբ կը սկսիմ միսթարութիւն զգալ՝ զքեզ
տեսնելով սուրբ խորհրդեան մէջ, մէկէն ցաւերս
ալ կ'աճին, մտածելով որ չեմ կրնար զքեզ ստա-
նալ. ամեն բան զիս կը տխրեցընէ, որովհետեւ չեմ
կրնար տեսնել զքեզ ինչպէս որ կը փափագէի,
և կը մեռնիմ չմեռնելու համար:

Երբ կը քաջալերուիմ զքեզ տեսնելու յուսով,
ով Տէր, ալ աւելի տրտմութիւն կը զգամ, վախ-
նալով որ կրնամ զքեզ կորուսանել. սոսկալի
վախով մը կ'ապրիմ՝ այսպիսի յուսով, և կը մեռ-
նիմ չմեռնելու համար:

Ազատէ զիս այսպիսի մահուանէ, ո՞վ Աստուած
իմ, և պարգևէ ինձ կեանք. արձրկէ զիս այսպիսի
ծանր կապանքէ: Ահա, զքեզ տեսնելու փափա-
գով կը մեռնիմ, և չեմ կրնար ապրիլ առանց
քեզի. վասն զի կը մեռնիմ չմեռնելու համար:

Լամ իմ մահա, և ողբամ իմ կեանքս՝ որ մե-
ղացս համար դեռ կ'երկըննայ: Ո՞վ Աստուած իմ,
երբ պիտի ըլլայ որ կարենամ ըսել ճշմարտապէս,
թէ կը մեռնիմ չմեռնելու համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀՕՐ ՄԸ
ՏՈՒԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ԱՐՈՒՅ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ՓՈՓՈԹԷ ԵՒ ԴԱՍ-
ՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ.

Ընտիր դաստիարակութեան նպա-
տակն է՝ առողջ մարմին, ուղղախոհ
միտք և առաքինի կամք մը ձևացընել,
որ անփոփոխելի և ընդհանուր նպա-
տակ մ'է. վասն զի ամեն աստիճանի և
ամեն կերպ դաստիարակութեան մէջ
ծնողք նոյն բանը կը ջանան իրենց տղոց
համար, որովհետեւ ամեն հասակի և ա-
մեն վիճակի մէջ պէտք ունիմք առող-
ջութեան, մտաց և առաքինութեան:
Ոչ հարուստն և ոչ աղքատն, ոչ զօրա-
ւորն և ոչ տկարն, ոչ շինականն և ոչ

քաղաքացին կամ զօրականն, կրնան
զանց առնել կամ հրաժարիլ այդ երեք
բարեմասնութիւններէն: Կարևորք են՝
եթէ ամենադիւր և եթէ աշխատաւոր
կենաց, եթէ հրամայելու և եթէ հնա-
զանգելու, ինչպէս քաղաքական պաշ-
տօնատարութեանց՝ նոյնպէս և դաշ-
տաց մէջ. և ինչ ալ ըլլայ կենաց ըն-
թացքն՝ առ որ հայր մը կը սահմանէ իր
որդիքը, պէտք է տայ անոնց անհրա-
ժեշտ այս երեք տեսակ բարեմասնու-
թիւնները, որոնք աղբիւր և նեցուկ են
ուրիշ ամեն բարեմասնութեանց:

Բաւական է եթէ ունենամք այսպի-
սի հաստատուն և ծանօթ նպատակ մը.
բայց յաճախ կանխակալ կարծիք և նա-
խապաշարմունք՝ կամ մոռցընել տուած
են մեզի այս նպատակս, և կամ արգի-
լած են մտադրութեամբ և յարատևու-
թեամբ մտածելու ադոր վրայ. և շատ
անգամ ալ առ այն հասնելու միջոցաց
մասին խաբած են զմեզ: Եւ ահա հոս՝
կարծիք, խորհուրդք և առաջարկու-
թիւնք կը շատնան և կը բազմանան. ա-
մենայն ոք նոյն վախճանին կը դիմէ,
բայց նոյն տեղն հասնելու համար գրե-
թէ ամենքն ալ զանազան ճամբաներ
կը բռնեն. և իւրաքանչիւր ոք կը պնդէ
թէ իւր բռնածն է միայն ուղիղ նոյն
տեղը հասցնողը:

Եւ միթէ այս չէ՞ դաստիարակու-
թեան վրայ գրող հեղինակաց շատե-
րուն զարտուղելուն և իրենց վնասակար
դրութեանց պատճառը. որոնք յանդըզ-
նելով դաստիարակութեան նպատա-
կին վրայ հաստատուն և ընդհանուր
դրութիւն մը տալ, անոր գործադրու-
թեան համար ալ հաստատուն և ան-
փոփոխ կերպեր կ'ուզեն աւանդել. և
ամենևին հաշուի տակ չեն ձգեր զանա-
զան հանգամանքներն և բնութեանց
տարբերութիւններն, կարծելով թէ այս
տարբերութիւնքն պիտի անհետանան
իրենց սկզբանց սաստկութեան առջին:
Եւ բազումք՝ ի ծնողաց խաբուելով այս
բացարձակ ճշմարտութիւններէն, կը
մոռանան և անփոյթ կ'ըլլան մտածելու
թէ ըստ առանձին հանգամանաց և յօ-